ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ և
ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

# ՄԱՅՐԵՆԻ

## 5-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Գրավոր աշխատանքներ

Կազմող՝ Արմինե Կոստանդյան

2021թ.

Ընթացիկ գրավոր աշխատանք

Հնչյունաբանություն

Ձևավորող գնահատում

1. Ամբողջացրո՛ւ բառերը:

Լուն __________ Երկիր մոլորակի բնկն__________ արբանյակն է:

Արգկ ____________ շիկացած գազային գնդ __________ է:

Կյնք __________ գոյություն ունի միայն Երկիր մլրկ_________ վրա:

Տզրքմ ____________ մի քանի մլրդ ____________ աստղ կա:

Տիեզերքը հտքրքր _____________ և զրմնլ ______________ աշխարհ է:

2. Երկհնչյունները տեղադրի՛ր բառերում:

Ձ-նածածկ, վայրկ-ն, տասն-թ,
յուրաքանչ-ր, անուշաբ-ր, բրդ-,
արդ-ք, հ-րասեր, ողջ-ն, գ-լուկ,
գ-ություն, պա-սակ, արծաթ-,
հ-թալի,  բարձրած-ն, խար-կ:



3. ա/Նախադասություննե՛ր կազմիր և յուրաքանչյուրում ընդգծի՛ր բազմաձայնաշատ բառը:

*Փոխաբերական իմաստով ի՞նչ կարող են անել՝*

 ________________________  ________________________

 ________________________  ________________________

4. Շարունակի՛ր անավարտ մտքերը: Յուրաքանչյուրում ընդգծի՛ր հնչյունների ու տառերի տարբեր քանակ ունեցող մեկ բառ:

*Ուրախանում եմ, երբ* ________________________________________

*Բարկանում եմ, որովհետև* ________________________________________

*Զարմանում եմ, քանի որ* ________________________________________

*Ափսոսում եմ, բայց* ________________________________________

*Կարծում եմ, որ* ________________________________________

**5.** Նկարի օգնությամբ կարճ հաղորդո՛ւմ պատրաստիր *տառերի պուրակի* մասին(3-4 նախադասություն)։ Բառերից երկուսում ձայնավորները գրի՛ր կանաչով։



# Թեմատիկ գրավոր աշխատանք 1

1. Կարդա՛ տեքստը և ձայնավորներով ամբողջացրո՛ւ ընդգծված բառերը: Գրի՛ր դրանք ամպիկներին:

Երեկոները, երբ մենք դաս էինք **պտրստմ**, հայրիկը **հճխ** մեզ իր մոտ էր **կնչմ** գրույցի և ասում կատակով.

-Դուք կարծում եք՝ **ձր** ուսուցիչները ինձանից լա՞վ **բնր** են սովորեցնելու:

Նա չէր բավականանում զրույցի **ժմնկ** բանավոր խորհուրդներով, որոշ մտքեր **խշր** տառերով գրել էր քարտերի վրա և **փկցրլ**, որպեսզի երեխաները **կրդն** ու հիշեն.

«Քո սրտի մեջ է **փյլմ** քո բախտի աստղը»,

«Առողջ **մրմն** մեջ՝ առողջ հոգի»,

«**Մքրթյնր** առողջության հիմքն է»....

(Ն. Թումանյանի հուշերից)



2. ա/Տեքստից դո՛ւրս գրիր 3-ական բառ, որոնցում՝

| Հնչյունները շատ են տառերից | Գրության և արտասանության տարբերություն կա | Կան երկհնչյուններ | 1-ին երկու վանկում նույն ձայնավորն է |
| --- | --- | --- | --- |
| | | | |
| | | | |
| | | | |

բ/Ձայնավորնե՛ր տեղադրիր զգացական բառերում և միացրո՛ւ հարցերին որպես պատասխաններ։

Ո՞ր բառով կկանչեր հայրը երեխաներին։

Ո՞ր բառով կզարմանային երեխաները։

Ո՞ր բառով կըժգոհեին երեխաները։

Ո՞ր բառով կհիանային երեխաները։

Ո՞ր բառով կավարտեր հայրը խոսակցությունը։

վ -՜յ

- հ-՜յ

պ -՜հ

-՜հ

ք-՜

3. Կազմի՛ր բառակապակցություններ, որոնցից մեկը լինի փոխաբերական իմաստով: Գրածդ բառերում ձայնավորները թող լինեն կանաչ գույնով:

- «Բախտի աստղի» պես ի՞նչը կարող է փայլել՝




- Ի՞նչը կամ ո՞վ կարող է առողջ լինել՝




4. Երկու խորհուրդ էլ ի՛նքդ ձևակերպիր՝ գործածելով երկհնչյուն ունեցող բառեր և ընդգծելով դրանք:

______________________________________________________________

______________________________________________________________

5. Նկարի օգնությամբ «հայտնվի՛ր» Թումանյանի տանը և 4-5 նախադասությամբ պատմի՛ր տպավորությանդ մասին։ Ընդգծի՛ր  բաղաձայնաշատ երկու բառ։



______________________________________________
______________________________________________
______________________________________________
______________________________________________
______________________________________________
______________________________________________
______________________________________________
______________________________________________
______________________________________________
______________________________________________
______________________________________________
______________________________________________
______________________________________________
______________________________________________

# Ընթացիկ գրավոր աշխատանք։ Երկհնչյուններ

## Ձևավորող գնահատում

1. Աղյուսակում պատկերներն արտահայտի՛ր բառերով և նշի՛ր երկհնչյունը։

| | Բառը | Երկհնչյունը |
|---|---|---|
|  | | |
|  | | |
|  | | |
|  | | |
|  | | |
|  | | |
|  | | |
|  | | |
|  | | |
|  | | |
|  | | |
|  | | |
|  | | |

2. Ի՞նչ գիտես նրանց մասին: Մեկական նախադասությամբ գրի՛ր:



______________________________________________



______________________________________________



______________________________________________

3.ա/ Ծաղկաթերթերին գրի՛ր վերջից միացող բառամասեր: Գրի՛ առ կազմած բառերը և երկհնչյունի փոփոխությունը ցո՛ւյց տուր այստեղ՝






______________________
______________________
______________________
______________________




______________________
______________________
______________________
______________________

բ/ Քո ընտրությամբ բառերից երկուսը գործածի՛ր նույն նախադասության մեջ:

_______________________________________________________________________________
___________________________________________________________________________

3. Ի՞նչ ***գյուտ*** կանեիր, որ կյանքդ ավելի հեշտանար: Գրի՛ր 3-4 նախադասությամբ՝ գործածելով երկհնչյուններով բառեր:

______________________________________________________________________
______________________________________________________________________
______________________________________________________________________
______________________________________________________________________
______________________________________________________________________
______________________________________________________________________

**Ընթացիկ գրավոր աշխատանք**

**Թելադրություն**

**Է-ե, Օ-ո ձայնավորների ուղղագրությունը**

***Ձևավորող գնահատում***

*Վայրի եղնիկանիկ երազում էր երբեք չթառամելու մասին: Երփնազօծ թևերով երգեցիկ թռչունների երամները հասնում էին հեռու երկնքին ու երջանկանում վերելքից: Երիցուկների առէջներին վայրէջք էին կատարում երբևէ չհոգնող մեղուները: Երեքնուկի երկարաձիգ դաշտում արածում էր էշերի երամակը: Մոտերքում մի քանի ժպտերես երեխա եզան լեզու էին հավաքում ու զգուշանում եղինջից: Երկինքն ու երկիրը հաշտ էին:*

*Աշունն օրեցօր ավելի վառ էր ներկում հնօրյա անտառը: Արևազօծ սաղարթները քնքշորեն օրորվում էին մեղմ հովից: Ցորենի դեղնազօծ դաշտերի օվկիանոսից անօթևան քամին եկել հասել էր անտառի օղակաձև բացատ: Փոքրիկ, անօգնական թփերն անօգուտ կռիվ էին տալիս, որ չկռանան: «Տարօրինակ են նրանք, ովքեր դժգոհ են ինձնից,- մտորում էր քամին:- Չէ՞ որ ես մեղմացնում եմ միջօրեի շոգը»:*

## Թեմատիկ գրավոր աշխատանք 2

## Է-ե, օ-ո, ը ձայնավորների ուղղագրությունը

1. ա/Լրացրո՛ւ է կամ ե, օ կամ ո և անհրաժեշտ տեղում ը։

Ամեն-րյա աշխատանքից երբև- չհոգնող -սկեթև մեղուն վայր-ջք կատարեց գետ-զրին ապրող երիցուկի դեղնազ-ծ առ-ջին։

— Է՛յ, նոր-՛կ, դուք, ինչ է, ոչ մի ան-զուտ ժամ չունե՞ք,- դժգոհեց ծաղիկը։- -նչաքաղցի պես ան-նդմեջ -թևանում եք մեր արևազ-ծ գլխիկներին։ Երեկ էլ գործ-նկերդ էր այստեղ։

Անակ-նկալի եկած մեղուն մի ակ-նթարթ շփոթվեց, ապա մեղմ-րեն ասաց.

— Երբևից- նեղացրե՞լ եմ քեզ, -թերայի՛ն երիցուկ։ Ես -նչասեր չեմ, պարզապես

-գտակար գործ եմ անում իմ -նտանիքի բար-րության համար։

— Ախր երբ ան-թևան քամին ան-րևույթ հայտնվում է և քնքշ-րեն օր-րում ինձ, դուք գալիս ու ձեր առ-րեական գործով խանգարում եք։

— Եթե ես մերթ-նդմերթ ծուլանամ, ինձ խստ-րեն կնախատեն և մի օր էլ դուրս կշպրտեն իմ բն-րրանից։

— Տար-րինակ է,— զարմացավ ժպտ-րես երիցուկը։ — Մի՞թե վայելքն ան-ական է քեզ համար, մի՞թե չես ուզում -րբեմն ան-անալ երազներում։

— Բայց չէ՞ որ...

բ/ 1-2 նախադասությամբ ավարտի՛ր մեղվի խոսքը։

2. Տեքստում գտի՛ր բառը և նոր նախադասության մե՛ջ գործածիր:

| Բառի բացատրությունը | Բառը | Նոր գործածությունը |
|---|---|---|
| Ոչ կարևոր | | |
| Վայր իջնելը | | |
| Կացարան չունեցող | | |
| Նոր եկած | | |
| Արևով օծված | | |
| Նյութ սիրող | | |

3.ա/Բառասկզբից միացող բառամասերով երեքական նոր բա՛ռ կազմիր և գրի՛ առ:









բ/ Բառերի ճիշտ փոփոխությամբ ու դասավորությամբ վերականգնի՛ր առած-ասացվածքները:

**ընկերներ, ուժեղ, մարդ, հարուստ**______________________________

**վտանգ, ընկեր, ճանաչել, մեջ**______________________________

**անգին, ընկեր, հավատարիմ, է** ______________________________

գ/ ***Երես*** բառով մեկ ասացվա՛ծք հորինիր:

______________________________

4. Անհրաժեշտ տեղում լրացրո՛ւ տառը, ապա շարունակի՛ր անավարտ միտքը:

**Մի ակ-նթարթում** ______________________________

**Վայր-ջքի պահին** ______________________________

**Կես-րվա շոգին** ______________________________

5. 4-5 նախադասությամբ պատասխա՛ն տուր մեղվին՝ գործածելով ձայնավորների ուղղագրության բառեր.

Է՜յ, մարդի՛կ, ինչո՞ւ եք գողանում մեր կերակուրը:

______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

## Ընթացիկ գրավոր աշխատանք

## Բ-պ-փ-ի ուղղագրությունը

### Ձևավորող գնահատում

1. Կարդա՛ և լրացրո՛ւ **բ, պ** կամ **փ**։

Գիրքը իմացության եր-նազարդ աղ-յուր է։ Ա-սոս է, որ մարդ եր-ևիցե ընթերցանության համ-երատար ճամ-որդը չդառնա։

Իսկ գիտե՞ք, որ հայերեն առաջին տպագիր գիրքը «Ուր-աթագիրքն» է՝ գրված գրա-արով։ Այն տպագրել է Հակո- Մեղապարտը Վենետիկում։ Ասում են՝ ի-ր նա վաճառական է եղել։ Իսկ գուցե դ-իր կամ քահանա՞։

«Ուր-աթ օրը կամ չորեքշա-թի հիվանդին տանում են եկեղեցու դուռը»,- այսպես է սկսվում համ-ավավոր գիրքը։ Ուր-աթը շա-աթվա այն օրն է, որը նվիրված է սուր-խաչին։ Գիրքն ամ-ոփում է աղոթքներ՝ խա-եբայական կախարդություններից հեռու պահող։ Մի քանի սր-երի կյանքի մասին էլ է գրված։

Հակո-ն իր գրքերը ոչ թե եր-նագույն է տպագրել, այլ սե- -սև ու կարմիր գույներով է ձևավորել։

Փա-ագո՞ւմ եք տեսնել գիրքը։ Ջինվե՛ք համ-երությամբ և մի ար-իափայլ օր գրքերով լե--լեցուն Ազգային գրադարանում կտեսնեք այն։

2. Եթե սոցցանցում ընկերներիդ տեղեկացնելու լինես վերը ընթերցածիդ մասին, ո՞ր միտքը կառանձնացնես։

____________________________________________________________________________

______________________________________________________________________

3. 2-3 նախադասությամբ պատմի՛ր՝ ինչպես անցկացրիր անցած ուրբաթը: Գործածի՛ր բ-պ-փ-ի ուղղագրության բառեր:

_______________________________________________

_______________________________________________

_______________________________________________

_______________________________________________